Հովհաննես Թումանյան

Տրտունջ

Օրերս անպըտուղ, տըխուր, ձանձրալի,
Ու գընում եմ ես ունայն տըրտունջով
Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի
Գերեզմանների շարքերի միջով:

Թաղել եմ նըրանց: Տխուր է ճամփան:
Եվ իմ հայրենի աշխարհում օտար,
Օտար ու մենակ անցվորի նըման,
Որ չունի ընկեր, ոչ տեղ ու դադար:

Օտար են շուրջըդ ու չեն հասկանում

Ոմանք քո վիշտը, ոմանք քո լեզուն,
Անտարբեր գալիք երջանիկ օրին,
Չըգիտեն նըրա կարոտը անքուն...

Չընչի՞ն մարդուկներ, լըրբորեն հանգիստ,
Անսիրտ, փոքրոգի, գըծծի ու կոպիտ.

Մեռնում են, մարում նըրանց հայացքից
Ե՛վ հոգու ձըգտում, և՛ սըրտի ժըպիտ:

Էլ ո՞ւմ առաջին սիրտըդ բաց անես,
Ո՞ւմ համար երգես սրրտալի երգեր,
Ո՞ր չքքին սիրես, կյանքըդ նվիրես,

Էլ ի՞նչպես ապրես անսեր, անընկեր...

Եվ օրերս այսպես տրխուր, ձանձրալի,
Ու գրնում եմ ես ունայն տրրտունջով
Իմ սիրած մարդկանց, իմ լավ հույսերի
Գերեզմանների շարքերի միջով:

1902